

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ա.— ՆԵՐՐՈՂԵԱՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՁԻՆ

(ԹՐԳԻՐ ԹԷՈՓԻՍՏԷ ԶՌԵՏՈՐ)

Այլ նա իսկ զործեաց զգործող զայդ, որ մտերմութեամբ սիրեցաւ ի ձէնջ, եւ պատուով մեծապուեաւ պատուեցաւ: Որպէս աւերնակաւ մատնողացն Դանիէլի տաղաք զմատենիչ սորա, բայց եւ ի գէպ է զի եւ երից մանկանցն բանասրկուացն հանկիւն կացուցանել զսոսա, որ եւ զիշխանութիւն մանկանցն յուշ անէին արքային Նարուգոգոնոսորայ, զի զիշխանութիւն նոցա չիչելով առաւելապէս վառէր ի բարկութիւն եւ բորբոքէր ի զայրացումն ի վերայ նոցա. եւ որպէս նոքա զայս ամենայն զմտաւ ամէին ասելով. Արդ են աստ Հրդեհայք, զոր կացուցեր ի վերայ գործոյ աշխարհիս Բարեկացուց, զի զդիտն քո ոչ պաշտեն, եւ պատկերին սկիւղ, զոր կանդնեցեր, երկիր ոչ պաղանեն: Այնպէս եւ Հարախուսք սորայ արարին. զպատիւ եւ զիշխանութիւն ի զայրացումն արկանէին, զի բորբոքիւր բոց բարկութեան արքային ի վերայ երջանիկ քահանայ վկայիս այս: Եւ որպէս Նարուգոգոնոսոր զհնոցն բորբոքելով, որ վառեալ ձիւթով, նաւթիւ, վշով եւ որթով, եւ լինէր հրնոց հուր եւ բոց, այնպէս եւ արքայս այս պատրաստեալ զտանջանարանս, կախաղանս, զկարանս, քերանս, քուքք, կաշիկս երկաթի բեւեռաւք, անաթս հրալիս: Եւ արդ եթե աստ վերադոյն ասացից զհամբերութիւն սրբոյս այս քան զմանկանցն՝ մի՛ եպերեցայց, քանզի թէպէտ եւ յաւթարութիւնն մի էր երկոցունց կողմանցն, այլ համբերութիւնն կարի վերադոյն է զանպաւն տանջանացն, թէպէտեւ ցաւ մարմնոյ խրատագոյն է, բայց կարի առաւել այն է որ զբազում ժամանակս կրէ եւ ոչ մեռանի՝ քան զսուղ ինչ ժամանակ:

Եւ արդ եթե էաւ կսկիծ ցաւոց երիցս երանելի մանկանցն մարմինն՝ այլ առ ժամ մի եւ ոչ աւր մի բաւանդակ, եւ այն իսկ ի հրոյ միայն եւ ոչ եթե ի պարզարար հրոյ կամ ի կայծականց, որ առ սակաւ սակաւ անցուցանէր կրտսկիծն ընդ փափկութիւն մարմնոյն, եւ այնպէս բերէր ի վերայ զմահն: Այլ այնպէս բարձրագոյն բոցով բորբոքեալ, որ արտաքոյ հնոցին քառասուն եւ ինն կանկնաւ հեռագոյն, յական թաւթափել վառելով անյայտ արարեալ զմարմին քաղղէացուցն, զոր եւ եթե ոչ այլ փութապէս համարեցուք ի ներքաղոյն զդաւրութիւն հրոյն, այլ զհաւասարութիւն արտաքնոյն վարկցութ: Եւ զիս՞ող զոյն պահու կսկիծ մարմնոյ հաւասարի պէս պէս տանջանաց ժամանակաց բազմաց, որ խրաքանչիւր այլ եւ այլ ունիցին զկսկիծ ցաւոցն: Իսկ եթե մանկունքն աղբեցան յահաւոր սպառնալեաց այնպիսի, որպէս եւ երանելի այրս այս, այլ ոչ հաւասար կրեցին զկսկիծ մարմնոյ, թէպէտ եւ մի էր յաւթարութիւնն, այլ հաւասար էր հաւատքն, եւ հանկոյն միմեանց յոյն եւ սէրն եռացեալ, այլ ոչ հաւասար կսկիծ տանջանացն, զոր կրեաց լուսաւորիչ հայրապետս այս, եւ պայծառազարդ մարտիրոսս եւ երջանիկ կենդանի նահատակս ի ձեռն Հարախուսաց Հարազունից:

Զոր իրրեւ լուեալ զամենայն, զոր ասացին Հարախուսքն, եւ վազմաղակի արտաքեալ կուշեաց զհաւատարիմ խոստովանողն Աստուծոյ, եւ զճամբիտ անարդպէս տառաւածոցն, կացոյց առաջի իւր եւ ասէ ցնա. Սէրն իմ, որ վառեալ առ քեզ, յորդորեաց զիս առաքել զքեզ ի սպասաւորութիւն փառաւորեալ

և Երկրորդագլխի աստուածոցն մերոց, զի որպէս մրտերիմ և անյերկուանելի ծառայութեամբ քով Հաշտ արարեր զմեզ, և վառեցեր մեծապէս զգութ մեր ի վերայ քո, զի ողորմութիւն բազում փութարէն գտանիցես ի մէնջ, այնպէս և սպասաւորելովն նոցա, որ քննիչ են զաղտնեաց, Հաշտեալ լինիցին ի վերայ քո, և աստուածոյն պարզեալ ընծեռեցես ի բազում բարութենէ նոցա:

Եւ արդ ոմանք այլ ինչ զբէն խաւսեցան առաջի իմ, զոր սակս նախանձու համարեցաք զչարախաւսութիւնն, և ոչ զործս կատարեալ ի քէն, որ բարի պարզեաց ընդունելոյ ակնկալութեան ունէիր զյոյսն, և զայն ի չարաց ընդունելոյ զործել պատճառս, և փոխանակ Երկրորդութեան նոցա անարդաւնքս մատուցանես, և փոխանակ խնկոց անուշահոտից՝ Թքանել ի փառաւորութիւնս նոցա: Եւ արդ փութայ յամալթ առնել զչարախաւս քո, Երկրորդագլխութեամբ քո, և առաւել ջերմացուցանել զսէր մեր ի վերայ քո՝ զոհնելովն նոցա, և մի՛ ուրախ առնես զնախանձաւորս քո ի վերայ քո, ընդունելով ի մէնջ ըզտանջանս մահու, որ սաստկանալոց են ի վերայ քո՝ սակս այդ պատճառանաց:

Ասէ Երանելին, որչափ և բարկութիւն քո սաստկանայ ի վերայ իմ, ուր արքայ, փասն այդ պատճառանոց՝ այնքան բարութիւն և քաղցրութիւն երկնաւոր արքային չորհեցին ի վերայ իմ, և որչափ զուրախութիւն Թրչնամեաց իմոց և պաշտանեայից քոց զործեցես յերկրի ընդ իս, այնքան առաւել ուրախութիւն և ցընծութիւն լինիցի բարեկամաց իմոց պաշտանէից թաւաւորին իմոյ որ յերկինս:

Եւ արդ, զխտութիւն լիցի քեզ արքայ, զի եթէ չարախաւսքն յոնցեն՝ ևս զխորհուրդս սրտի իմոյ յայտ արարից լեզուաւ իմով առաջի քո, և զբարբառ մանկանց արբահամեանց, որով զարդարեցան զբունք ականջաց իմոց, զայն արկից լեզուաւ իմով յունկն քո, և ցաթոռակիցդ բռնաւորին այն, խաւսեցայց պաշտանակիցս նոցա, զի զկուռս քո ոչ պաշտեցից, և զբաւշիղն, զոր չինեցեր, երկիր ոչ պաղից: Պարծեցայց, և զբանս նոցա առից ի բերան իմ, և Հաւատովք նոցա եռացայց, և յուսով նոցա խաւսեցայց ընդ քեզ, եթէ Է Աստուած յերկինս, որ կարող է փրկել զմեզ ի ձեռաց քոց արքայ, որպէս զնոսս ի ձեռաց աւրինակցին քո, և ի տանջանաց քոց ապրեցուցանել, որպէս և զնոսս ի հրոյն բորբոքելոյ հնոցին:

Եւ իբրեւ աւրինակաւ և բարբառով մանկանցն տնոցիկ խաւսեցաւ թաղաւորն, այնպէս և աւրինակաւ բռնաւորին այնմ լի եղև սրտմտութեամբ թաղաւորս այս, և փոխեցաւ զոյն երեսոց նորա, և հրամայեաց բոլրք սաստկագոյնաւք հարկանել զերջանիկ և զքաջ նահատակս այս, և ասէ ցարքայն. Գիտութիւն լիցի քեզ արքայ, զի զոր թեթեւագոյն տանջանաւ քո խաւսիմ ցրքեզ, զնոյն և խտտագոյնաւքն խաւսեցայց, քանզի որպէս և խորհել ևս, որ չարաշար տանջանարանաւք տանջեցես զիս, այնպէս և ևս խորհել եմ զխորհուրդ քարի, զի Հաստատագոյն Հաւատովք, զարչելի անարդաւնք անարդեցից զանջուռն և զանմոռնն աստուածք քո, առ որս ոչ գոյ իմաստութիւն: Եւ որչափ ևս սաստկանայ բարկութիւն սրտմտութեան քո ի վերայ իմ, այնքան ևս առաւել Հաստատին խորհուրդք սրտի իմոյ ի Համբերութիւն սրտմտութեան քո: Եւ որչափ ևս սաստկանան տանջանք քո ի վերայ իմ, այնքան առաւել արիանան և զաւրանան խրաքանչիւր անդամք իմ ի կրել զզանազան տանջանս քո:

Ասէ Թաղաւորն. ուր անմիտ բարբառ լեզուոյ ի բարի խոստմունս, և ի սպառնալիս չարեաց, այն իսկ զիւրաւ կատարին, որ զփութարութեան կապանսն ոչ լինի խափանիչ, և զանահարեալն զմոռացումն պայմանին զիւրաւ սղենու քան հարկանողն, ուստի խտտութիւն ցաւոյն արկանի ի վերայ կրաւ-

դին, և ի նմա ոչ ազդին: Արդ փորձեցից այս աւր զգաւրութիւն բանից քոց, եթէ գայցեն անմասն չանդամք քո զհետ պարծանաց բարբառոյ անդամոց քոց, որ ընդունող ևն սպառնալեաց իմոց տանջանաց, և ոչ պարծեցաւք կրելոյ միւսոյն գաղաղնալիսն, որ պարծի մասն ալլոցն կրելոյ: Եւ հրամայեաց քերուաւք քերել զամենայն անդամս նորա:

Ասէ սուրբն. բոտ պարծանաց անաւարադոյն իմոյ անդամոյս մայկնացան կարմրաներկ ծիրանաւք թանձրութիւն իմոց անդամոցս, և իրբեւ բարեաց և պարգեւաց խոստացող երախտաւոր ցնծայ առաջի իւրոյ արարչին, զի որպէս զպարծումն բանիցն ած յունկն քո, որով զայրացաւ սիրտ քո, և զայրացումն այն, որ խափանիչ կարծեցաւ ի քէն լինել նորա պարծանացն, այն իսկ կարի պատճառ եղև ևստարելոյ բանից պարծելոյ նորա, և համբերութեամբն իւրեանց անդամակիցք նորա ևս առաւել յորդորեն դնա, ալլ ևս հաստատադոյն լինել անդամակցացն ի շարշարանս քո, և քեզ յամալ լինել յովն՝ նա իսկ բոտ պարծաման բանից իւրոց պայծառանայ և ճարտարանայ տո ի յաւրհնել զԱստուածն իմ, որ յոյս է, և ի յոյս բնակեալ, և յուսաւորեցէլ գալս իմ, զի մի ննջեցից ի մահ: Այնիւ ուստի ակն ունիցիս, զի պատամամբ աստուածոց քոց չահել զկենդանութիւն մարմնոյ, և մի տոսպկս թշնամիդ իմ՝ եթէ յաղթեցից նմա, և անարդեացէլ գատուածս քո, որ խաւարեալք են և բնակեալ են ի խաւարի աղջամղջին, և խաւարեցուցանեն գալս ձեր, զի կենդանութեամբ մարմնոյ ննջեալիք ի մահ, և պարծեցի լեզու իմ թէ յաղթեցի նմա:

Ասէ արքայն. պարտ էր ինձ նախ հատանել զիւզու քո, զի մի նովաւ խաւանցիս զհալհոյութիւնս բարի գործոց աստուածոցն, ալլ զուղէ հատանել յովն նորա՝ լուսնի պարծումն քո, և փարատի բարկութիւն իմ, և չիճանի բոց բարկութեան իմոյ, և հանդարտի սրամտութիւն իմ, և մասն ալլորիկ թողից գնա առանց մնասու, զի որչափ և ճարտարանայ ի խաւսել զհալհոյութիւնս նրա աստուածոցն, այնքան առաւել սաստկանայ բարկութիւն իմ ի միտայ քո, և մատնալ բորբոքեացի սրամտութիւն իմ, զի շարաշար տանջանաւք տանջեցից զքեզ մասն յանդդնութեան քո, որ յանդդնեալ անարդեցեք զբարէգործ աստուածոն իմ, որ ալլպէս հատուցին ինձ փոխարէնս, և անդրէն հաստատեցին զիս յաթոռ հայրենի արքայութեանս:

Ասէ երանելին. Առիթ է անարդելոյ քեզ գատուածսն քո զպիղծսն, և զանագորոյնսն, հատանելոյ ի քեզ զիւզու իմ, զի զաւրութեամբ Աստուծոյն իմոյ, զոր ևս պաշտեմ, որ ապրեցուցանելոց է զիս ի տանջանաց քոց, արքայ, և փրկեցէլ զիս ի ձեռաց քոց, պայծառանայ և ցնծացէլ յարգարութիւն առարչին իւրոյ, բանայ զշրթունս իմ և զքերան իմ առ նա աղաչանս մատուցանել, բոտ Պապոսի տակոյն. զի «տացէ ձեզ զհոգին իմաստութեան և յայտնութեան զիտութեամբն իւրով, լուսաւոր առնել զաչս սրտից՝ առ ի տեսանելոյ ձեզ, զինչ է յոյս կոչման նորա, և զինչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նորա ի սուրբոց». և ի ձեռն փոքր և անաւարադոյն անդամոյն բացցին զբունք ականջաց քոց, յորդորի և քում անդամակիցդ սորա նուագադոյն գաւրութեամբ իւրով, և խոստովանեցիս զՏէր բոլորով սրտիւ քով, և պատմեցիս զամենայն սքանչելիս նորա, և լուսաւորեցի(ն) կարի փոքրագոյն միւս անդամն քո, և տեսանես զյոյս արեղականն արդարութեան, որ ծագեցաւ յաշխարհի՝ առ ի լուսաւորել զամենայն մարդ եկեալ յաշխարհս:

Եւ առաւել ևս բարկացեալ թագաւորն հրամայեաց կողմել կաշիկս

երկաթիւս, եւ ընտել զնա բեւեռոյք սրաւք հաստատուն, անդ ուր սոսորոսթիւն է դաշապարացն առնել ուղղել զգնացս իւրեանց :

Եւ հրամայեաց արանց դաւրաւորաց ունել զձեռաց նորա, զի մի անկանելոյն յերկիր ընկողմնելոյ՝ ոչ հարկանին բեւեռքն ի դաշապարս նորա : Եւ այլքն ուժգնադոյն դաւրութեամբ մղէին զնա, եւ հարկանէին բեւեռքն այն յատրս նորա, եւ անցանելոյ բեկանէին զոսկր ներքան(ա)ց նորա, որով խառագոյն սոսորի ստատկանալ ցաւով. եւ արիւնն հոսէր եւ ծովանայր ի կաշիկան երկաթիւս :

Ասէ թագաւորն, հարց ցոտող քո եւ իմացիր եթէ պայծառացուցին զբարբառ լիզուի քո եթէ յամաթ արարին :

Ասէ երանելին. կարի յոյժ պայծառ են բանք նորա քան զոսկի եւ քան զականս պատուականս, եւ յամաթ արարին զտանջեցողսն. քանզի ի ձեռն բեւեռացս այսոցիկ, որով համարիս տկարացուցանել զկարս սոցա, կարի յոյժ դաւրացան դաւրութեամբ բեւեռելոյն ձեռաւք եւ ոտիւք ընդ փայտին, որով երկրպագեալն ի քէն պատրեաց զնախահայրն քո, եւ արտաքեռաց ի փափկութենէ գրախտին, որ եւ զքեզ փութայ զրկել անտի, որպէս եւ զանաւրէն հայր քո, որ բնակեցոյց ի խաւարս խորին զժոխոցն, որ եւ զքեզ ձեպեացի առնել ժառանգորդս, զոր եւ աւարեաց Աստուծոն իմ արեամբ իւրով, եւ բեւեռաւք իւրով սրբով խորտակեաց զաստուածող քո, եւ կորեաւ յիշատակ նոցա աղապարս : Եւ իսկ բեւեռաւքս այսոցիկ զաւրացոյց զոսո իմ կոխել եւ մտնել զդուռս եւ կրկնապակոյց ի ձէնջ, եւ զնալ ի վերայ իժից եւ քարբից, որ են կառք ձեր՝ եւ ի վերայ ամենայն դաւրութեան թշնամույն, որ են աստուածք ձեր :

Ասէ թագաւորն. ի րաց բարձէք զկաշիկիդ զայդ յոտից դորա, եւ արացուք զկամս սրաի դորա, եւ եղիցուք զմա երախտաւորք, զի որպէս պարծի դաւրացան ոտք դորա ի դաւրութենէ բեւեռացդ, այնպէս եւ ամենայն անդամք դորա առցնն դաւրութիւն յաւրինակէ բեւեռաց անտի, որ հարկանելոյց են յիւրաքանչիւր անդամս սորա, եւ զաւրանան յաղթել մերոց անմահեզ աստուածոց՝ մեռեալ Աստուծոյն իւրեանց դաւրութեամբ, որով անամաթ եւ անպատկառելի խաւսին, եթէ նոյաւ կենդանանամք եւ փայլելու մեծ զբաւտի ուրեք փայլեմք :

Եւ որպէս բեւեռաւքս այսոցիկ զաւրացան սաք դորայ զնալ ի վերայ դաւրութեանց մերոց աստուածոցն, այնպէս եւ իւրաքանչիւր անդամաւք ուր եւ հարկանելոյց են բեւեռք իմ, առնուն դաւրութիւն ընկողմնել ի վերայ ծաղկանց զբախտի այնք, զոր եւ մոյորութեամբ խաւսի :

Եւ փաղփաղակի հրամայեաց կաղմել տատասի երկաթի սրածայրս, եւ տարածել զնոսա ի վերայ յատակի, եւ մերկացուցանել զոտրն, եւ առնուլ արանց թաղմաց եւ բարձրացուցանել զնա եւ ընկնուլ ի վերայ սրեալ տատասկացն երկաթի, մինչեւ ամենայն տատասկն զցեալ բեւեռեցան յամենայն մարմին սրբոյն, մինչեւ ոչ մնաց տեղի զի լինէր ասանց բեւեռաց տատասկին :

Եւ սալ սորբն. Արհնեա անձն իմ զՏէր եւ ամենայն ոսկերք իմ դառուն սուրդ նորա, եւ ուրախ եմ ի Տէր եւ զարձեալ տեւեմ ուրախ եմ, եւ որպէս յաղամայ մարդորէացար, որպէս եւ չարչարողն Աստուծոյն իմոյ մարդարեացալ յաղամայ փան իմոյ Աստուծոյն, որպէս եւ ինձ ուսոյց փարդապետն իմ եւ սալ. եթէ յաւ է զի մի այլ մեռանիցի ի վերայ ամենայն ժողովրդեանդ եւ մի ամենայն ժողովուրդդ կորիցէ, այնպէս եւ յիս կատարեացին նկամաւքս քո, եւ զոր հնեկնական բանիւք խաւսեցար զորքք կատարեալքն, եւ իւրաքանչիւր անդամք իմ չարչարանաւք իւրեանց զարդարին զարդուք Աստուծոյ, որպէս հարսն զարդարեալ եւ պատրաստ ի մտանել յառաջատան անմարտի, այն-

պէս տանջանաւ քոյովք, եւ հեղմամբ արեան իմոյ մարմնոյս, ոգենում զրե-
հեզս եւ զծիրանիս, եւ ցաւովք ոսկերաց իմոց զարդարին մատուք իմ մա-
տանեաւ, որով դաւալքն զարգարին, եւ պուխ իմ պսակաւք այնոքիմք, որով
փեսայն յառապատին պայծառանայ, եւ բազկունք իմ կոպանաւք, որով նա-
հատակքն ճանաչին, եւ թիկունք իմ սնիփորոնաւն, որով քահանայապետքն
զարգարին, եւ անձն իմ զբրահին, որով հղնասպետք զբարբիտն վայելեցեն,
եւ ուս իմ մահանաւն, որով յաղթողք թշնամոյն նահատակք ի նահատակա-
դրէն պատկեցին, եւ տկանջք իմ զարգարին զնզաւք աստուածային ձայնին
ւրով զկոչումն յարքայութիւնն երկնից լուիցեմ, զոր եւ տանջանաւք քոյովք,
որպէս զուսասցիւր, վայելեմ ի վերայ ծաղկանց անթառամելի աստուածարոյս
պայծառապունից եղեմս:

Եւ որչափ եւ տանջանքն բազմանայր՝ այնչափ եւ անգամք նորա մը-
րանային համբերութեամբն, եւ բարկութիւնն թագաւորին թանձրանայր. եւ
մինչ խափանէր մի տանջանս՝ զմիւսն խորհել լինէին, զի իւրաքանչիւր տան-
ջանք յաշտիճանս փերին բարձրացուցանէր զկրաւդսն, եւ պատրաստեալ կա-
խաղանս, որ եւ ծանրութիւն կախաղանին սաստկացուցանէր զտանջանսն:

Եւ ասէր ներողն ի մարտին. բարեւոք արարեր, ոյ թագաւոր, զի բոս
չարչարանաց իմոյ թագաւորին երկնաւորի պատրաստեցեր զտանջանս իմ.
զուցէ՝ որպէս կախելովն իւրով ազատեաց զնախահայրն քո ի բռնութենէ
պատրուղին քո, այնպէս եւ ի ձեռն կախաղանիս իմոյ՝ զկախելով ի խորս դը-
մոխոց ազատեցէ եւ ապրեցուցէ ի դրանէ մահու, ուստի եւ ես ապրեցայ ի
յաւիտեանական մահուանէն, եւ յուսամ հառանել անփաղճան կենդանութեանն:

Եւ որչափ սուրբն խաւէր զփրկութենէ թագաւորին, նա իսկ առաւել
եւս վասն մեղանելոյ իւրոյ ի տանջանս պեհնին սաստկացուցանէր զզանազա-
նութիւն տանջանացն, որով կրողն առաւել եւս պայծառանայր պսակաւքն, զոր
սղեկոց էր համբերութեամբն, եւ տանջողն եթէ ոչ զղնացի, սղեցցի իբրեւ
զպատմուճան զրոց պեհնոյն, այլ նախ իսկ սրտմտութեամբն առաւել եւս բոր-
բոքէր, եւ որչափ ի տանջանսն ներէր՝ այնքան առաւել բարկութեամբն վառէր
թագաւորն:

Եւ հրամայեաց յանաւթ մի ինչ լնուլ կակղաղոյն կայծակունս եւ ա-
ռէ. պսակեցէր զամբարիշտդ զայդ պսակաւքոյ այդ պայծառապունաւք, զի չիք
յերկրաւոր նիւթս պայծառապոյն քան զրոց. զղեցուցէր զգլուխ զորս պսա-
կաւքոյ այդ, որ պարծի առէպ եւ ասէ՝ եթէ պսակիմ տանջանաւք այդ ի Քրիս-
տոսէ իմմէ, որ այսն եղև վասն մոլորական բանից իւրոց յաղականաց իւ-
րոց, եւ փշաւք պսակեցին. եւ ոչ իմանայ անմիտդ այդ՝ եթէ որ ի փշոց պը-
սակէ հրաժարել ոչ կարաց, զգա կարացէ մեծագոյն պսակաւք պսակել կամ
պայծառապունաւ քան զիւրն: Բայց բարեւոք խաւսեցաւ եւ ուղիղ, որպէս եւ նա
իսկ ուստի ական ունի պսակիլ յայնմանէ, որ վասն մոլորական բանից իւրոց փը-
շովք պսակեցաւ, եւ չարչարեալ մեղաւ. այնպէս եւ դա իսկ մոլորական բա-
նիք իւրովք զղեցցի զպսակդ զայդ, զոր եւս պատրաստեցի դմս. այլ այնպէս
արարէք զի աչք զորս տեսցեն զպայծառութիւն պսակի իւրոյ, զոր ոչ է հնար
զղարդ զլիտն տեսանել լուսաւոր անդաման: Եւ արկին վաղվաղակի պանու-
թըն դասն ի պուխ նորա, եւ որպէս հրամայեաց կապեցին զբերան անաւթոյն ի
զլուխ նորա, եւ ծածկեցին զերեսս նորա, եւ ական ունէին ապականեալքն ապա-
կանութեան երեսաց նորա ի գաւրութենէ կայծականցն:

Եւ ասէ երանելին, որչափ եւ յաճախեա ի չարչարանս իմ եւ ի տանջա-
նրս, եւ բոս Պաւղոսի՝ իմոյ լուսազարդ վարդապետին ասացից, եթէ Պարսի
եմ ի չարչարանս իմ վասն ձեռք, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստ,

տասի ի մարմնի խմում, վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի, որոյ եղէ ևս պաշտաւնեալ, ըստ տնտեսութեանն Աստուծոյ, որ տըւեալ է ինձ՝ ի ձեզ կատարել գրանն Աստուծոյ(6) :

Եւ ևս գիտեմ իսկ՝ զի չարչարանաւք իմոյք եւ տանջանաւք բժշկեսցին վէրք ձեր, որ վիրաւորեալ են ի նետից պատրուղին ձեր սատանայի, որ մոլորեցուցանէ զձեզ հանապազ, եւ պատրաստէ մատնել տանջանաց, որ ոչ է առ ժամ մի, որպէս իմս, զոր փութեայք ամէլ ի վերայ իմ, այլ կարի խտապոյն եւ անբերելի յաւիտեանս յաւիտենից, եթէ ոչ զղջանայք եւ փութայք պատրաստել զիս բժիշկ, եւ զլեզու իմ ըզխող զգեղ, որ առանց սպոյ, դաւրութեամբ բժշկապետին, որ չարչարանաւք բժշկեսց զիմ վիրաւորութիւնս, որ վիրաւորեցայ նախ ի վիրաւորողէն ձերոյ : Եւ լցեալ բարկութեամբ թաղաւորն տոյ՝ Անմիտ լնդէ՞ր ոչ լռես ի խաւերոյ, զգայրացումն սրտի իմոյ, որ առաւելապէս վառէ զբարկութիւն իմ ի վերայ քո, վասնդի քո մոլորութեամբոյ ոչ բաւականանաս, այլ յորդորես զիս թողուլ զանմահ առատածան իմ, եւ պաշտել զմեռեալն Աստուածն, որ ոչ եթէ մեռաւ պարզաբար՝ այլ չարչարանաւք մահուամբ անարդս :

Առէ սուրբն. եւ վասն նորա չարչարանացն յաւարիմ տանջիլ, զի մահուամբ նորա կենդանացայց, որ յառաջն ի ձեռն անմահ չարին այն, զոր դու աշխմ պաշտես, մահացայ եւ զրկեցայ նովաւ յանմահ կենդանութենէ շրնորհացն :

Առէ թաղաւորն. ոչ գիտեմ եթէ զինչ խաւսի դա, զի այնչափ խաւարեալ է սիրտ դորա, զի հասեալ է զմա մեռանել, եւ եղեալ է զյոյս իւր կենդանանալ ի ձեռն նորա որ զանձն իւր ոչ կարաց ապրեցուցանել ի մահուանէ :

Առէ երանելին. լուայ զի տաաց աշակերան յետին, իմոյ առաջին վարդապետին ցգաղատացիան. Ո՞ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ ճշմարտութեանն չհաւատալ, որոց զրեթէ առաջի աշաց ձերոց Յս. Քս. զրեցաւ ի խաչ ելեալ :

Առէ թաղաւորն, եւ այսուհետեւ կամ իմ խնուլ զականջն իմ, զի ամէլնեւին ոչ լսիցեմ զբարբառ լեզուի քո : Եւ ասոյս այնիւ կամեցաւ փորձել զնա եւ տանջել, որով ոսկին պայծառանալ սովորի, եւ դաւրութիւն երկաթոյ առաւել առնու զաւրութիւն ի վերայ դաւրութեան իւրոյ :

Եւ վաղվադակի ամաւ տանջարանն, որով զայսուսմն մարմնոյն պատրաստէր, եւ զմարմնոյ ապականութիւն զիւրաւ գործէր, որով անհնարին է ի զիմ ի կալ ամենայն մորթոյ, զոր սղեցեալ է բնութիւն մարդոյ : Եւ մինչ փրչմամբ աշտու ուժգնագոյն ուռչէին անդամք սրբոյն, տէր երանելին. բարեոք եւ զայդ ամէր զմաւ, ով գատաւոր, զի ըստ բնութեան անշնչոց նիւթոց փորձես զշնչաւոր նիւթեալս, եւ արհեստիւ այն՝ որով երկաթն սովորի զդաւրութիւն անդամանդութեան տոնուլ, եւ ոսկին զպայծառութեան սղենուլ կերպարանս, այնիւ փութաս փորձել զիս, որով իբր երկաթ զաւրանամ ի տանջանս քո, եւ իբր ոսկի պայծառանամ ի տանջարանէ քումմէ, որով ոսկին պայծառանալ սովորի, զի գործարանաւքս աշս թէպէտ եւ զարբինն բիրտապատիկ լի է բորստութեամբ եւ վիրաւք, այլ գործարանն զնականն կատարէ, եւ յամելոյն խոփոյն ի քութայն անդ՝ եռալոյն պնդանայ առնուլ զմուխ ստոմբութեան, եւ կարէ պատառել զբաղմամեաւ անդս կորդացեալ, զի հերկելով կակղացուցանէ աւաւաւաւաւութեամբն զգժուարալաստակն զայն առ ի յրնդունել զսերմանսն իբրեւ զերկիր պարարտս, եւ բուսանելոյն ըզխեսցէ զբաղմապատիկ արդիւնսն :

Եւ զարձեալ զի ոչ խոտեսցի հիւանդութիւն ոսկերչաց, յորժամ գոր-

ծարանաւքս այս, որով զիս փութաւ փորձել, պայծառացուցանել փութայ զոսկին, եւ որչափ ստէպ ստէպ շարժեն ի պէտս արկանելոյ զչունչ իւրեանց ի բովան՝ առաւել եւս կակդանայ բնութիւն նիւթոյն եւ պայծառանայ, եւ զորժի զարդս, եւ լինիցի ցանկալի աշաց տեսաւդին, առ ի պատրաստել զարդ հարսանեաց առադաստի, եւ պոսկի փեսայից մտելոց յառադաստի, աւրինակաւ այսնրք եղիցի եւ տանջանարանս քո: Զի որպէս եւ աւրինակ է արուեստարանս այս զարբնի, որով փորձես զիս, այնպէս եւ եւս եղչց յաւրինակ խոփոյ: զի աւրինակաւս այս, որով բնութիւն երկաթոյ սոփորի դարանայ, եւ եւս դարացայց առնուլ մոխ ի բոցոյ Հոգւոյն Սրբոյ, զի կարացից ի կարծրացեալ անդս հառանել ահաւսս, եւ անդ արկանել զսերմանս բարի, եւ զարմատս փշոց ի բաց խելի, չլինել խափանիչ աճման բուսոյն բարի:

Եւ իբրեւ զոսկի պայծառացայց առ ի լինել զարդս ցանկալի, զի մայրաշացայց յաշս կանանց, առ ի լինել նոցա սղեցումն ի զարդս հարսանեացն երկնից, եւ պատրաստեացի պոսկս ցանկալի արանց ամենեցուն, զի նովաւ զարդարելով սիրէ բնգունել առադաստ հարսանեաց երկնից բնդ փեսային ի նմա մտանել, որ անդ է հանապաղ. զի մասն այսորիկ ի պատճառս մահու, որ անհնարին է սղենուլ զկենդանութեան պարզեւս, մնացից առանց մահու, զի զմահացեալքդ կոշեցից ի կենդանութեան կոշումն:

Եւ որչափ դարանայր ի մարմնի նահատակս այս, այնքան առաւել հիւանային բնդ համբերութիւն նորա: Եւ փութայր ի շարժարանս տանջանացն, եւ ոչ զիտէր լեթե զինչ զորժէր: Եւ մինչ յիրող յայդ տարակուսեալ լինէր, եկեալ մօրն առաջի նորա եւ տեսն. Գիտեա, ով թաղաւոր, զի լեթե ոչ էր եղեալ անարդաւոյ մերոց աստուածոցն անաւրէնդ ալղ, պարտ էր զմա տալ զրաւ ժակ մահու, եւ իբրեւ որդի հարադատ արքայի, խնդրել ի զմանէ զվրէժս իւրքեւ յորդւոյ սպանաւորի հաւր արքայի, զի մի եւս մնացէ ժառանգ նմա յաշխարհիս Հայաստանեաց:

Զայս ամենայն իբրեւ լուաւ թաղաւորն, զի որդի էր Անակոյ, յայնժամ յոյժ լի եղեւ սրամտութեամբ, եւ ապա խորհուրդ արարեալ զի արկեց զնա ի վիրապի անդ, զի նախ քան զիջանել ոտից նորա յառաւս վիրապին ի թիւնից ամօիցն շարաշար մեռցի: Եւ մինչ զայս խորհեցաւ հրաման տուեալ, զի տանելով արկեցն զնա ի վիրապն խորին, ի մէջ շարաշար ամօիցն, եւ մահարար թիւնարեր վիշապացն: Եւ մինչ տեսալ երթալին զերանելին ի վիրապ անդր՝ զդաւթականն երգս նուազելով տէր ցմիտս իւր. Յուսայ ի Տէր, ով անձն իմ, զի նա է Ասատւած աւգնական իմ, եւ ես ի նա յուսացայց, զի նա փրկեացէ զիս յորդայթից որսորդաց եւ ի բանից խոտովութենէ, եւ մի երբեք հարցի զքարի սոն քո. ի վերայ իմից եւ քարբից զնապես զու, եւ առ ոտն կոխեցես զառիւծն եւ զվիշապն:

Զարացիք անձն իմ եւ մի երկնչիք ի վիշապաց անտի եւ յիժից բաղմաց, զի մասն նորա յաւթարեցար մեռանել, որ ետ իշխանութիւն իւրոց աշակերտացն առելով. Ետու ձեզ իշխանութիւն երթալ ի վերայ իմից եւ քարբից, եւ ամենայն դարութեան թշնամոյն: Եւ այսպիսի բանիւք դարանայր եւ տէր զյաւթարութիւն մանկանցն, որք հաւատով ապառապինեցան եւ յուսով զիմեցին ի բորբոքումն հնոցին, եւ սիրովն յաղթեցին սպանաւորեաց թաղաւորին:

Եւ արդ անձն իմ, հոգի եւ բնութիւն, որ հաւատով եղիք զյոյս ձեր եւ ապրեցաք ի զանազան տանջանաց, նովին հաւատով եւ քերթեալնդն սիրով եւ հոգով դարացիք, եւ գիտեմ զի ապրեռջիք յիժից եւ քարբից եւ յամենայն դարութենէ վիշապաց, եւ յաղթելով իմանալի վիշապացս այսոցիկ յետնոց, ի ձեռն ծննդոց առաջնոյն ծնունդք առաջնոյն, ուստի առաջինն պարտեցաւ, եւ

առաջինն որ անընտանեկ ծննդեամբն վասն ծննդոց ծնաւ յերկրի, որ ծնաւոն փախեալ ի բնութենէ մարց, եւ կատարեաց զաւրէնս մայրական աղբերաւք երկոքումք, ուստի անմահն արթամբ անտի զմահ ճաշակեաց, ուստի յառաջնոյն մինչեւ ցալթմ ամենեքեան ըմպելով անտի զնոյն բաժակ արբին զմահու, բայց միայն յերկուց առաջնոց, որ ոչ ըմպեցին անտի եւ անհրաժեշտ մնացին ի բաժակէ ալլոց ըմպողաց, ըստ աւրինի այնր աւրինադիրն աւրինաւքն նոր, որ անդրանիկ եղեւ ի մեռեալս փառաւք միաճնութեամբն, զարացոյց զմեզ զամենեւեան յաղթել պատրող վիշապին, եւ յուսով եմ ի կենդանութիւն մեռելոյն այն, որ մահուամբ իւրով մահացոյց զվիշապարուղիս մահն, զոր ի բերանոյ անմահին եղաւ ի լեզու թղթաւդին, որ զպատճառս մահուն լեզուաւ իւրով երկնուդ արկ յականջս երկրորդին յետ առաջնոյն, եւ երկրորդն յունկն առաջնոյն, եւ մերկացան յաստուածապետս լուսոյ պատմութեանէն, զի նովին զարութեամբն, որպէս պատկառեցաւ անմարմին չար վիշապն՝ ի մարմնոյ անմարմնոյն, եւ չլացաւ մահապարտ խայթոցք նորա, եւ թիւնսն պատրողարուղիս եղծաւ, եւ մնաց առանց զործոյ. այնպէս եւ վիշապք մարմնաւորք վիրապարնակքք պատկառեցեն ի ստեղծութեան ստեղծաւդին, եւ ի խորս վիրապին զարութեամբ իջնելոյն, ի խորս դժոխոց կենդանի մնացուք ի մահարուղիս թիւնից նոցա, որպէս եւ անդ մահացեայն առաջնովն կենդանացաւ ի մահապարտ որովայնէ նորա, եւ որպէս հողիքն ամենեքեան աղատեցան յամենեկեկոյ բաւրավ խաւարին բնակութեան դժոխոցն, այնպէս եւ կենդանիք ի խաւարամած թանձրարորք պատրուակելոյ ի կոտապաշտութեան մոլորութենէ, այնպէս եւ մնալովն մեզ կենդանի ի մէջ մահարեր աւձից, որ վերագոյն թուեցաւ տանջողին քան զամենայն խրատաղոյն տանջանս, որ մինն քան զմիւսն ի վերայ զաւրովն իւրով առ դրունս ունելով բերէր զմահն: Եւ յական քթթել կարծէին աննեքելի ըմպել զբաժակ մահու, զոր բազում ժամանակաւ տանջանաւք ալլովք յականկալութենէ իրացն վրիպեցաւ տանջողն, վաղվադակի աղատելովն մեզ յականկալութենէ նորա, խաւարեալքս այս միախումբ բազմութիւնքս առնուն զիւտութիւն, զի նա է Աստուած ճշմարիտ, որ կարաց ապրեցուցանել զմեզ ի դրանէ մահու այնր, որ անվրիպելի է ամենեցուն կոխելոցն առ սեամս բնակարանի այնր, վաղվադակի տան զթիկունս իւրեանց առաջնորդաց այնպիսի բրնակարանի, եւ դարձուցանեն դերեսս իւրեանց ի լոյսս հալածող խաւարին, եւ ուղղեն զոտս իւրեանց ի ճանապարհս աստուածապաշտութեան նոցա աճելովն, զուցէ ի պատուհանէ ծառային չար խցցուք զականջս մեր, եւ արժանաւորիմք պատրաստել զնա լսող լինել զպարզեւս բարւոյն եւ զաղնուին եւ զհաւատարմին, եւ աճեցեալքն զեկայք աւրհնեալքն ի նորին բերանոյն, որ զհաւատարիմ աճեցողն դովեալ, զհաւատով առ նա երթեալսն կոչէ եւ ասէ. Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ եւ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ դարձալութիւն ի սկիզբանէ աշխարհի:

Չայս ամենայն խաւարով երանելի եւ քաջ քահանայ վկայս այս եւ մարտիրոս հայրապետս Գրիգորիոս, հայրածին խորին յոյնս, եւ Ելլեղասրնունդ առաջնորդ Հայաստանեաց, յրնտանեաց աստարարարառն եւ աւտարարարառով զրնտանիսն ընտանեցուցանող իւրոյ ընտանութեանն: Փողանքման լեզուն կարծր ականջաց բացողն, արեղակնանման շառաւիղն, թանձրամած մառաղխոյն թափանցիկ լոյսն, ներքին մարդոյն արտաքնովն լուսաւորիչն, հոգեոց մոլորելոց մարմնով առաջնորդն, հոգեկիւնաց կորուսելոցն մեղէն դրտողն, ընդ հինգ քանքարացն աճեցուցանողն, բազմաւքն վերագոյն հաւատարիմն, ընդ մտեալն յուրախութիւն Տեառն նախագահն, ընդ ծառայսն հաւատարիմն, ընդ առաքեալսն համապատիւ լսող պատուոյն, ընդդէմ տանջանացն

վէմն, առաջի տանջանարանին կակղապոյն մարմինն, ի տանջանարանս իրր բնականս կրող, եւ համբերելովն դերարնականն, սովորութեան արհամարհողն, եւ անսովորականին տարողն, իրր անմարմին մարմնովն, եւ մարմնովն ըստ անմարմինսն համարեալն:

Գրիգորիոս, ի տրդիտաց դպիրն, եւ ի յիմարաց իմաստունն, ի մառադիաց արեղակն, ի խաւարելոց լոյսն, եւ ի գիշերականաց պայծառագոյն լուսինն, յամբափակ կողմանէն արուսեակն, յանառաւատ գիշերոյն լուսեղէն ալցն, ներքին աշաւքն սրտեստակ քան զարտաքինն, արտաքնովն սակաւատեւսակ, հոգւովն զառատ լոյսն, մարմնոյն տրնջանացն պատրուակողն, հոգւոյ աշացն լուսազարդողն, աստղաթիւ լուսապայծառ բանքն, թափանցիկ լուսեղէն ճառագայթն, ականջարաց երգարանն, զուարճացուցանող քնարն, արիւնազարդ փեսայն, ալրի առագաստին զարդարողն, հարսինն ալրի փեսայացեալն, մանկանց առագաստին զարդարողն, եւ անպըտուղ ծառոյն պտղարբիւշին, եւ կոկորդաց զառնացելոց քաղցրացուցանողն:

Երթեալ առ դուրս բանտին վերապին. եւ զրնական տրտմութիւն ի մարմնոյն ի բաց մերկացաւ. եւ սղեցաւ զհոգեղինացն, որ այնպիսիսն ոչ աղ-դէր, եւ ուր արհաւիրք մահուն էր ակնկալութիւն, եւ ոչ հաւատար միայն տրտմութեան հանդերձելոյն ի բանտի տառապիլ, վրիպելովն յակնկալութենէ այնմ սպառնալեացն ակտանայր բնաւ, այլ հաւատով երից մանկանցն վարիւր, որպէս նոքա յուսով հաստատեալք, սակս ապրելոյ ի բորբոքմանէ հնոցին, առանց երկեղի լինէր արկանելն նոցա ի հնոցին, այնպէս եւ երիցս երանելի ալրս ալս, ամուլաք երկոքումք լծեալ զմիտս իւր յուսով եւ հաւատով, զաստուածահայրականն վերելդէր զտառան. «Եկի ես ի խորս յայտ ցամաքեալ ծովու, եւ չրջանք վիշապաց պաշարեցին զիս, ընկլայ ի խորս անդրնդոց, որ ոչ գոյ ինձ հանդիստ, եւ եթէ Տէր է ապաւէն փրկութեան իմոյս»⁷:

Եւ իբրեւ իջուցանէին զնա անդ սպառնալիք մահու թաղաւորին, աւճքն պատկառելովն իւրեանց յերանելոյս, զպարծեալսն ի նոսա՝ ամաչեցուցանէին, ասէին ցմիմեանս թիւնարուղիս եւ մահարեր վիշապքն:

Ո՛ր է սա որ զհակառակն ցուցանէ մեզ, եւ զերկեղ իջելոյն ի մեզ առ մեզ արկանէ, եւ պահանջի ի մէնջ ի նմանէ պահանջելին, աւրինակաւ բարեկացեոց խրատարանին վարեացուք, եթէ նոքա յերխտասարդէ պատկառեցան, ուստի ամենայն բնութիւն պատկառելոցն ի նմանէ սասանել սովորի:

Պա՛րտ է եւ մեզ ի հասակէ առնս այս պատկառել, որ եւ խրատարանն այն ի մէնջ զարժուցանեն զերեսս իւրեանց, զի սա՛ պաշտանեա նորա է, որ հեղացոյց զգայրեցումն բռնաժանեացն այնոցիկ, նա իսկ եւ զմահարեր թիւնս մեր ի պէտս կենդանութեան նիւթոյ վարէ, որով առանց նորա անհնարին է գկենդանութեան ընդունել պարգեւս, եւ որպէս նոքա զգայրացումն քաղցոյն հեղացուցին, եւ ի պատրաստել կերակրոյն պատկառէին, եւ զքաղցոյն փարատողն, որ ապականելոց էր ի բնութենէ, ապականող արարին պատճառ փարատելոյ զայրացեալ բնութեան իւրեանց:

Եւ արդ եթէ նոքա, որ առանց այնպիսի կերակրո անհնարին էր գկենդանութեան ժառանգել պարգեւս, այնպէս ահիւ սպասաւորեցին, որ զլափող եւ զսպականող լեզուս իւրեանց, ուստի պատկառումն անպահանջելի է, եւ ի փաղաքանաց բնութենէ մերկացեալ, զայն իբրեւ խաւսուն անդամս, ուստի բանաւորաց բանս ողորջանաց սովորին բղխել, ի պէտս այնպիսի իրաց վարէին, որ լիզելովն զստս նորա՝ գկուցանէին զհնազանդութիւն իւրեանց:

⁷ Հմմտ. Սղմ. ԿԸ, 2-3:

Որչափի եւս առաւել մեք ոչ հեղացուցանեմք զընտելինս մեր, որ քաղ-
ցնելոյ զայրացումն զնոսա ոչ ստիպէ, եւ առանց կերակրոյ աշնովսի զկենդա-
նութիւն մարմնոյ ունել, առաք աւրէն յարարողէն մերմէ, եւ պատրաստեա-
ցուք զկեղուս մեր ի սպասաւորել զա[ր]շապարաց նորա, զի նա հրամայէ այժմ
մեզ, որ հրամայեաց սպասել զա[ր]շապարաց դորա, եւ այնիւ որով զապակա-
նութիւն մարմնոց գործեմք, նոյաւս պատաստութեան աւրինակն գործեա-
ցուք, եւ ոչ զթշնամութեան, այլ զբարէգործութեան գործս այժմ գործեա-
ցուք, եւ զբարեկամութեան բնոյ նմա, ուր զթշնամութեան աւրէնս պահել ըն-
դունեցաք, զնորա հրամանս կատարեցուք, ուստի դարձուցին զյոյս խրեանց
այնոքիկ, որ զմեզ իրրեւ զսպասաւոր խրեանց խրատարանս պատրաստեցին
երկրպագողաց նորա, ուստի նորա մեաք աւտարացան խարամոր ստացաւդին
զմեզ իւրոյ խորհրդոյն նուագարան, եւ մերով ունկնդարաւորութեամբ, եւ մեք
նոյաւս պաշտեցաք ի նոցանէն որք զնա պաշտեն, եւ բնութեամբ պաշտեմք զա-
նարդեալն ի մերոց:

Չայդ ամենայն ի դէպ էր տեսլ տւձիցն ցմիմեանս: Եւ իրրեւ իջեալ
սուրբն յատակ վիրապին, ուր բազմութիւնք տւձիցն բնակեալ լինէին, տանն
ցնաւ. Ե՛կ սպասող զլիսոց մերոց, ի մէջ սպասողաց զա[ր]շապարաց քոց, եւ
զհակառակն մերում հրամայողին գործեցուք. քանզի որպէս փայտն, որ
պատրաստեցաւ դէն մահու, ի ձեռն չըջնջման մեր յականջս նախամուրն քո,
եւ նորա խաւելոյն յունկն նախահաւրն քո, եղաւ թշնամութիւն ի միջի մե-
րում, եւ նորա փոխանակ կենդանութեան զմահ հաշակեցին, այնպէս եւ դա-
տապարտութեամբ փայտին պատուհասողին նոցա եւ մեզ, նորա կենդանացան:
Եւ դու փոխանակ ակնկալութեան մահու, ի տեղի մահաբերից բնակարանի,
վայելեալ զկենդանութեան պարզեւս, եւ համբերողդ տանջանաց զանազանից,
փոխաձեւեալ զընտելինս վայրենեաց մահաբեր զաղանաց զառնալքնչոց ի բը-
նութիւն աղանեաց հեղոց քաղցրամբնչից:

Ե՛կ կրկին Դանիէլ, եւ զիս կրկին դուր զվիրապոս զայս, ոչ եթե ա-
ռեւծեաք զայրացելովք, այլ վիշապաւք մահաբերաւք, ուստի խտապոյն զա-
լանքն այնոքիկ ստիպին մահանալ, եւ դարձուցանեն զերես խրեանց ի մէնջ,
եւ վերադոյն տանջանաւք քով քան զԴանիէլ գտնր հեղացուցանելով զզաղա-
նապոյնքդ քան զառեւծքն Դանիէլի, եւ պատկառելիդ ի մէնջ կրկին այլոց ցան-
կալի, եւ մնալովդ կենդանի ի տեղոջ մահու, եւ ի ժանեաց թիւնարուղիս մա-
հաբերից, եւ որպէս Դանիէլ ցանկալի եղեւ քեզ, եւ առաջնոցն քան զքեզ, այն-
պէս եւ դու լինիցիս ցանկալի յետնոց քոց, եւ այնոցիկ ոչք ի նոցանէն բաղմա-
նան մինչեւ ցկատարած. եւ յաղթողդ բազում վիշապացոս, ոչ եթե սատակելով
զաւրութեամբ ստացողին, այլ զպատճառս մահաբերութեան ունելոյն պահել
կենդանի, եւ զմահաշունչքս կենդանութեամբ անգործս պահել՝ աւրինակաւ
սատակելոյն:

Ե՛կ քարոզաւդդ բանին Որդիութեան Հաւր, զոր Դանիէլ քարոզեաց,
եւ արայ վերագոյն գործ քան զԴանիէլին ի Բաբելոն՝ յաշխարհս Հայաստան-
եաց, ոչ եթե հաւատալովն տեսողաց սքանչելեացն միայն եւ յետնոցն մնալով
ի կրունս առաջնոցն, այլ ի ձեռն քո հաւատալովն մարմին լինելոյ բանին, եւ
աղոյն տոհմեալք ի յաղտոց հաւատացելոց զնոյն հաւատս հատաւորունս պահելով
մինչեւ ցկատարած, եւ հաւատաւուն հաւատովք քովք, որպէս ապրեցար ի
տանջանարանաց խտապունից, ակնկալութեամբ այնր չըջեաց իրրեւ ի մէջ ա-
լանեաց ընդելաց, եւ ծիծռանց զարնանարերից, ի մէջ զաղանաց մահաբե-
րաց, եւ վիշապաց թիւնարուղիս մահացուցանողաց: Ե՛կ եւ ցոյց զվիրապոս
զայս, զժողովարանս աւձից բազմաց, իրրեւ ժողովարան քահանայից բազմաց,

և Կաթողի ուր կացցեն ոտք քո, տեղի քահանայարանի ուր և Կլուխ մերոյ առաջնորդին ֆախջախեցաւ, և որպէս չիջմամբ հնոցին ցաւդով հիացումն եղեւ, այնպէս և խոնաւարուղիս բղիմամբ մերոյ թիւնիցս չիջմամբ հիացումն լինի ամենայն արարածոց, հաւատացելոց յանուն սուրբ նահատակողին հայրածին և քահանայապետին, յորոյ անուն անվախ մտեր յասպարէզս և նահատակեցար կենդանի նահատակութեամբ, և յաւժարիս քահանայանալ քահանայապետին, որ վասն քո պատարագեցաւ Հաւր, և Կաթողեացար վասն անունն նորա մատչել պատարագ:

Ձայս ամենայն պարտ էր աւծիցն ասել ցՍուրբն: Եւ իջեալ եկաց ի մէջ աւծիցն այնոցիկ բաղմաց և իրշապաց, պատէին մի զմիովն, իրբեւ զհնազանդ սպասաւորք, բաղմաց առաջնոցն, նախ քան զիջանելն նոցա ի վերապի անդ, յաւդս մահացուցանէին զնոսա, իրբեւ իրշապք բռնաժանի և թիւնաւորք: Կան չուրջ զմիովն իրշապք բաղմաք, և մնայր ի մէջ նոցա առանց երկեղի, որ բաղմաք ի միոյն լինէին փախստականք ահին և երկեղի:

Ո՛վ կենդանի նահատակիս այս, կրկին երիս մանկունս, ո՛վ քահանայ [յ]ապետիս այս և կրկին մարդարէիս Դանիէլի: Նոքա ի մէջ հնոցին, և բոցն քառասուն և ինն կանկունս չուրջ զնոքաւք, և ի նոսա ամենեւին ոչ մերձեցայր, այլ ի մէջ հրոյն ցաւդով զարդարեալ լինէին: Եւ սա ի մէջ աւծից, և բաղմութիւնք թիւնարեալն չուրջ զնովաւ, և ամենեւին ի նա ոչ մերձանալն, այլ ի մէջ նոցա, իրբեւ ի մէջ ծառոց ծաղկապարդից, զուարճանայր, և որպէս Դանիէլ ի մէջ առիւծուցն բաղմաց մնաց առանց վնասու, այնպէս և սա ի մէջ իրշապաց և աւծից մնայր առանց մահու:

Ոչ զհաւատացեալն պատճառն մահու թերահաւատիցն մահացուցանէր: Ոչ խրատարանն մեղանշականաց թէրահաւատից առ հաւատացեալն դործէր, այլ տեսանելին իրբեւ անտես ի տեսողաց, որ տեսողն նոցա զմահ տեսանէին, այնպէս առանց վնասու մնայր և առանց մահու. և տեսողքն միոյն իրբեւ եթէ զոր ոչ տեսանէին, այնպէս տեսանելովն զնա ի նա ոչ մերձեցային, այլ կախն զէմ յանդիման միմեանց, և հասարակացն բարձաւ ի միջոյն նոցա, որ ընդ այլ պատուհասս ի հասարակացն ոչ բարձաւ: Ոչ սպասելն նորա դործիւր գլխոց նոցա, և ոչ նոքա զա[ր]շապարաց նորա, այլ բնականն ի նոսա անբնական դործիւր: Հայէին բնութիւնք աւծից յերանելին և երանելին ի բաղմութիւն իրշապացն: Հաւատն և յոյսն սրբոյն զերկոսեան կողմանն ի խաղաղութիւն պահէր. ոչ աւծին զերկու պատճառն դործէին, կամ տալովն զթիկունս իւրեանց՝ մեկնէին ի կերպարանէ ստեղծուածոյն: Ոչ արհամարհելով զիմէին ի վերայ առ ի դործել զթիւնարուղիս սպանութիւն:

Ոչ Սուրբն զնոյն նման լատ պատուհասին առաջին երթայր զհետ պատուիրանին, այլ կարծեմ դատաջին ստեղծուածոյն զլուսառեղևաւորութեան ժամանակին դործէր, որ նախ քան զպատուիրանադանցութիւնն լինէր լուսով զարդարեալ. ոչ բնութիւն զպահանայ՝ առ բնութիւն ստեղծուածոյն զայրացեալ լինէին, ոչ ստեղծուած զսղուշութիւն զազանացն ստանայր, այլ իրբեւ յանցանքն պատուիրանադանցութեան ի ներքս եմուտ, բնութիւն զազանացն ի վերայ մարդկան առին զայրացումն ապականութիւն դործել ի մարմինս նոցա, և բնութիւնք մարդկան առին զերկեղս ի դաւրութենէ զազանաց, և կամ զփախչելն ի միմեանց դործէին, կամ ի ճակատումն ընդ միմեանս զիմելովն ցուցանէին, և բաղմաք ի միմեանց ստատակէին:

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 3)